ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/3 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	Կիտել-կիսաշրջազգեստ՝ Կիտել տոնական սպիտակ կանացի՝ կտորը սպիտակ (300-320գ/մք խտությամբ, 65% բուրդ, 35% Պ/Է) մարմինը կիսագրկող մակերեսով, հաստ փողքերով, կարանովի թիկնամասով, հետծալված օձիքով, օձիքի եզրերը մշակված են մուգ կարմիր (բորդո) մահուդե կտորից եզրագծով, օձիքի միացման կարում մշակված կախիչ, սովորական երկկարանի թևքերով, թևքերի վրա մշակված են ծալքեր (մանժետներ), որոնց վերին եզրերը կարված են մուգ կարմիր (բորդո) մահուդե կտորից եզրագծով, իսկ թևքածալքերի հետնամասում տեղադրված են երկուական Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշով 14 մմ ոսկեգույն մետաղյա համաձուլվածքից կոճակներ: Կիտելը կողքերից ունի կափույրով ծածկվող կտրվածքով ներկարված գրպաններ, երկու կողմերում ունի ծոցագրպաններ: Կիտելը միակոճկուն է, դեպի ձախ կոճկումով՝ Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշի պատկերով միաշարք երկու ոսկեգույն մետաղյա համաձուլվածքից կոճակներով: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում՝ սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները նույնպես՝ գրպանների կափույրներ, օձիք կրկնակարվում են սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Աստառը՝ 8-C5-BШ արտիկուլի սպիտակ կտորից: Ձախ թևքին կարվում է Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշով թևքանշան: Դատախազների կիտելի աջ և ձախ օձիքների վրա ամրացվում է Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշով տարբերանշան: Հայաստանի Հանրապետության դատախազների դասային աստիճանների տարբերանշանները ուսադիրներն են՝ կարվում են կիտելի աջ և ձախ ուսակարերի վրա: Կիսաշրջազգեստ տոնական՝ մուգ կապույտ

	կիսաբրդյա (160-180գ/մք խտությամբ, 60% բուրդ, 40% Պ/Է) կտորից ուղիղ կարվածքով է, երկկողմանի սեղմոններով, աստառով (աստառը՝ մետաքսյա, 8-C5-ԲՇ արտիկուլի մուգ կապույտ), գոտին՝ գոտեմակօղերով, հետևամասում՝ բացվածքով, կողամասում կոճկվում է մեկ կոճակով և շղթայով։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/3 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	